

ՀՏԴ՝811.19

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՏԻԵՁԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՏՈՄԱՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ

Հայկանուշ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Անանիա Շիրակացի, Համարող, տիեզերագիտություն, մոլորակ, արև, աստղ, երկնային զարդեր, տոմար, կենդանակերպ, Համաբարբառ.*

2004 թվից անընդմեջ պարբերաբար պատիվ ենք ունեցել մասնակցելու Գյումրիում պարբերաբար գումարվող Շիրակի պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» հանրապետական, ապա և միջազգային գիտաժողովներին և ունկընդդրել բազմաթիվ հրաշալի, բովանդակալից գիտական զեկուցումներ: Բայց ցավոք սրտի, այդ ընթացքում քիչ է հնչել Շիրակի մեծագույն զավակներից մեկի, յոթից ութերորդ դարի սկզբի մեծ գիտնական, «համարող»՝ մաթեմատիկոս, աստղագետ, բնագետ և տոմարագետ Անանիա Շիրակացու՝ Շիրակունու վերաբերյալ զեկուցում:

Եվ քանի որ մեր կողմից է կազմվել նրա «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության համաբարբառը, այդ պակասը լրացնելու նպատակով որոշեցինք անդրադառնալ, հաղորդակցվել այդ Մեծությանը, ապա և ներկայացնել մեր կատարած ուսումնասիրության արդյունքը և աշխատանքը:

Նախաբան. Անվերապահորեն հաստատված է այն իրողությունը, որ Շիրակ աշխարհը, մասնավորապես Գյումրին, արվեստների և արհեստների երկիր է: Բայց ի լրումն այդ ամենի, պետք է ավելացնել, որ Շիրակը նաև գիտության, պատմագրության երկիր է, որը նոր շրջանի մեծությունների հետ մեկտեղ տվել է Անանիա Շիրակացու պես բնական գիտությունների մեծ գիտնականի, Շապուհ Բագրատունու, Սամվել և Մխիթար Անեցիների նման մատենագիրների: Ի դեպ, Շապուհ Բագրատունու վերաբերյալ ուսումնասիրությամբ էլ 2004

թվից սկսվել է մեր մասնակցությունը «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» գիրաժողովին, իսկ Սամվել Անեցու վերաբերյալ տարբեր ժամանակներում ներկայացվել է երկու ուսումնասիրություն:

Շիրակացու կյանքի մասին տեղեկություններ ենք ստանում իր իսկ ձեռքով գրված ինքնակենսագրականից, ինչպես նաև թվաբանական խնդիրների տվյալներից, որոնցում հաճախ է հիշատակվում Կամսարական իշխանական տան ներկայացուցիչների անուններ, որից կարելի է եզրակացնել, որ նա կապեր է ունեցել այդ նախարարական տան հետ: Կենսագրության մեջ հաղորդված տվյալներից կարելի է եզրակացնել, որ այն գրվել է ավելի ուշ տարիքում, երբ Մեծ Համարողն արդեն հասցրել էր դառնանալ իր և իր մասնագիտության հանդեպ եղած մարդկանց ապերախտությունից և անտարբերությունից:

Նրա մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում նաև Գրիգոր Մագիստրոսն ու Սամվել Անեցին:

Անանիա Շիրակացու՝ Շիրակունու ծնունդը համարվում է յոթերորդ դարի առաջին տասնամյակը, մոտավորապես 610 թվականը: Ինչպես արդեն անունն է հուշում, Անանիա Հովհաննեսի որդի Շիրակացին ծնվել է պատմական Շիրակ աշխարհի այն ժամանակների կենտրոն Շիրակավանում՝ Կամսարական իշխանական նստավայրում, որից էլ հետագայում ստացել է իր մականունը՝ Շիրակունի: Հոր անվան հիշատակումը կատարել է տոմարագիտության մասին իր աշխատանքի մեջ: «Քանի որ շատերը չեն, որ ծանոթ են հաշիվների հետ, մանավանդ շինականները ...այդ պատճառով ես՝ Անանիա, որդի Հովհաննեսի Շիրակունի, կազմեցի հինգ հարյուր երեսուն տարիների բոլորակը...»¹: Պատմաբան Աշոտ Աբրահամյանը, որը կազմել է նրա «Տիեզերագիտություն և տոմար» ընդհանուր խորագրով քննական գրաբար բնագիրը Հ.Աճառյանի խմբագրությամբ, հենվելով Շիրակացու՝ իր ուսուցչի մասին հայտնած մի տեղեկության վրա, նրա ծննդյան մոտավոր տարեթիվը համարում է 610-ական թվականները:

Սակայն Սամվել Անեցու հաղորդած՝ Շիրակացուն վերաբերող երկու թվականներից կարելի է եզրակացնել, որ նրա ծնունդը վերը նշված ժամանակից ավելի ուշ է: Թվերից մեկը՝ ՈԿԹ./669/ այն է, երբ Անաստաս Հայոց կաթողիկոսը նրան առաջարկում է կազմել նոր տոմար, իսկ երկրորդը՝ ՉԺԲ./712/, երբ պատմում է նրա աշակերտների մասին: Այս երկու թվերի միջև 43 տարվա միջոց է: Եթե դրան էլ գումարենք նրա հասունացման, ուսման նպատակով ճանապարհորդության, արտերկրում ուսումնառության, ապա և հայրենիք վերա-

¹ Անանիա Շիրակացի, Եր., 1979թ., էջ 173/

դառնալուց հետո մեծ համբավ ձեռք բերելու նրա կյանքի մի քանի տասնամյակ, ապա վերջին՝ ՉԺԲ. տարեթվի հիշատակման ժամանակ նա առնվազն կլիներ 75-80 տարեկան: Եվ եթե 712-ից հանենք այս 75-80 տարիները, կստացվի 637 կամ 632 թվականներ: Քանի որ մեր ուսումնասիրության նյութը մեծահամբավ Համարողն է, մենք էլ հետևելով նրա մեթոդաբանությանը, կատարել ենք նման վերլուծություն և եկել այսպիսի եզրահանգման, որ նա ծնված պետք է լինի մոտավորապես 630-ական թվականներին: Ապա թե ոչ, վերջին՝ ՉԺԲ թվագրության ժամանակ, երբ Շիրակացին ապրում ու դեռ շարունակում էր վարդապետական՝ ուսուցչական աշխատանքը, նա, ըստ գիտնականի վերը հայտնած կարծիքի, կլիներ մոտ 100 տարեկան: Եվ ՉԺԲ /712/ թվականն էլ նրա կյանքի վերջնաժամկետը չէ:

Անանիա Շիրակացին սկզբնական կրթությունն ստացել է իր հայրենի Շիրակավան գյուղում, ապա մեկնել Բյուզանդիա իր նախասիրած բնական գիտությունների, մասնավորապես համարողական՝ հաշվողական արվեստի բնագավառում ուսում ստանալու և հմտանալու նպատակով: Այս հանգամանքը, որ նա հնարավորություն է ունեցել ուսանելու, կրթություն ստանալու, թեկուզ տեղական մակարդակով, ապա և արտերկիր՝ Բյուզանդիա մեկնելու, ուսումը շարունակելու համար, խոսում է այն մասին, որ սոցիալական առումով նա առնվազն ազատ դասին է պատկանելիս եղել, որ կարողացել է Հայաստան երկրից անարգել դուրս գալ, ինչպես նաև իր կյանքի և ուսման հարցերը կարգավորել: Մի հանգամանք ևս, սա ցույց է տալիս նաև, որ նա բավականին հասուն երիտասարդ է եղել ուսման մեկնելիս և ինքնուրույն է մեկնել, նրան չեն տարել, ինչպես Ղազար Փարպեցուն, որը տարիքով ավելի փոքր է եղել Հռոմ տարվելիս. «Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Հռոմս՝ ժամանակեցի անդ ամս...» գրում է Փարպեցին²:

Ճանապարհին հանդիպելով Քրիստոսատուր անունով մի վարդապետի, նրա մոտ վեց ամիս ուսանելուց հետո, տեսնելով որ նա չի բավարարում իր հետաքրքրություններն ու չի հագեցնում գիտության հանդեպ ծարավը, Շիրակացին մեկնում է Կոստանդնուպոլիս, բայց բանիմաց մարդկանց խորհրդով ճանապարհը շարունակում է դեպի Տրապիզոն՝ մեծահամբավ գիտնական Տյուքիկոսի մոտ ուսումը խորացնելու համար: Տյուքիկոսը ծանոթանալով նրա ուշիմությանն ու բանիմացությանը, գիտության հանդեպ ձգտմանը, նրան որդու պես է ընդունում և հոգ տանում նրա հանդեպ: Տյուքիկոսի մոտ ուսանելու էին գալիս տարբեր տեղերից, իշխանական ընտանիքների զավակներ, իսկ Անա-

² **Ղազարայ Փարպեցույ** «Պատմութիւն Հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» Տիղիս, 1904. էջ 187:

նիան միակն էր իր ոչ իշխանական ծագմամբ, բայց մեծ իմացությամբ: Նա ութ տարի մեծ ջանադրությամբ հետևում է իր մեծանուն ուսուցչի տված ուսմանը և խորանում գիտության մեջ, հատկապես համարողական արվեստում, քանի որ Շիրակացին մաթեմատիկան՝ համարողական արվեստը համարել է բոլոր գիտությունների մայրը: Ահա թե ինչպես է բնութագրում նա թվի արվեստը. «...յոժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչինչ համարի բան իմաստութեան առանց թուոյ, կարծելով զնա մայր ամենայն իմաստից»³:

Նա այնքան է հմտանում և առաջադիմում ուսման մեջ՝ վայելելով իր ուսուցչի սերն ու հարգանքը, որ բարձր իշխանական ընտանիքներին պատկանող նրա դասընկերները նախանձով են լցվում նրա հանդեպ:

Անանիա Շիրակացին Տյուփիկոսի մոտ ութ տարի ուսում ստանալուց հետո, հարուստ գիտելիքներով վերադառնում է հայրենիք՝ իր գիտելիքները հայրենիքին ծառայեցնելու ոգևորությամբ: Բայց ինչպես հաճախ է պատահում /Այդ մասին նաև Խորենացին է իր «Ողբում» ցավով նշել:/, նրա խորը գիտելիքները հայրենիքում մեծ ոգևորությամբ չեն ընդունվում և չեն գնահատվում: Ընդհակառակը, իր աշակերտներից ոմանք, դեռ կարգին ուսում չստացած, բայց իրենց ամենագետ կարծելով, թերուս հեռանում են նրանից, ինքնուրույն գործելու և նույնիսկ զրպարտալից հերյուրանքներ են տարածում նրա վերաբերյալ: Նա այդ մասին խորը ցավով է ասում: «Եւ ես տրուպս ի Հայաստանեայց ուսայ ի նմանէ /Տյուփիկոսից. Հ.Հ./ զհօր արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհն մեր, առանց ուրուք լինելով ձեռնստու, միայն ջանիւ օգնականութեամբն Աստուծոյ և աղօթիք Ս.Լուսաւորչին. թէպէտ և ոչ ոք եղև շնորհակալ իմոյ աշխատութեանս ... զի իբրև եկի ի Հայս, բազումք էին առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ ոչ մնացին կատարման արուեստիս, թողին զիս և մեկնեցան, և սկսան ուսուցանել՝ զոր ոչն գիտէին, և ոչ էին հասու: Կեղծաւորք և սնափառք, ցուցանել կերպարանս գիտութեան և կոչիլ ի մարդկանէ ռաբբի: Եւ ասեն ի վերայ իմ պարսաւանս, որք յինքենէն յերիւրեալք...»⁴:

Թեև ըստ 12-րդ դարի մատենագիր Սամվել Անեցու վկայության, հայոց Անաստաս կաթողիկոսը հանձնարարում է Շիրակացուն՝ կազմել նոր տոմար, որն համապատասխաներ ուրիշ ազգերի տոմարին, տոմարական բարդություններից խուսափելու համար, և նա ամենայն ջանադրությամբ կատարում է հանձնարարությունը, բայց Հայրապետի մահից հետո անտեսվում է նոր տոմարը՝ Շիրակացու մեծաջան աշխատանքը, որը 11-րդ դարում փաստել է նաև

³ **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտություն և տոմար. Առաջաբան Ա.Աբրահամյանի, էջ 6. 1940,. Յերևան:

⁴ **Պատկանյան Զ.**, Անանիայի Շիրակունույ մնացորդք բանից, Ս.Պետերբուրգ, 1877, էջ 3:

Գրիգոր Մագիստրոսը: Մի՞թե Անանիա Շիրակացու հանդեպ այսպիսի վարմունքը Հայոց կաթողիկոսի կողմից նրա գիտելիքների ու հմտությունների բարձր գնահատում չէ: Ներկայացնում ենք այդ հատվածը. «Հայրապետն Անաստաս կոչե առ իւր զմեծ վարդապետն Անանիայ Անէից գեղջե՝ անշարժ ըստ այլոց ազգաց դնել տօմար և մերոյ ազգիս. զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչև կամէին ժողովով հաստատել զնոյն՝ վախճանի սուրբն Անաստաս՝ անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն, այլ առաջին կարգան վարէին»⁵: Սամվել Անեցին նույնիսկ նշում է Շիրակացու այն աշակերտների անունները, որոնք հեռանալով նրանից, ապերախտորեն նրա մասին հերյուրանքներ էին տարածել. «Աշակերտքն Անանիայի՝ Հերմոն և Տրդատ՝ և Ագարիա, Եգեկիէլ և Կիրակոս՝ երթեալ յԵրուսաղէմ հաւանեցան երկաբնակացն, և ի դարձին ո՛չ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա: Իսկ նոքա ուր հասանէին՝ զնա ասէին պատճառ հայեոյութեան՝ զոր մի ոք իշխեսցէ ասել կամ հաստատել»⁶:

Սակայն մեծարգո գիտնականների /Չ.Աճառյան, Ա.Աբրահամյան/ աչքից վրիպել է այն, որ Անաստաս անվան փոխարեն Առաջաբանի հեղինակ Ա.Աբրահամյանը սկզբում նշել է Կոմիտաս կաթողիկոսի անունը, ապա Սամվել Անեցու «Հավաքմունք...»-ից մեջբերել է վերը նշված նույն հատվածը: «Շիրակացին այստեղ /Հայաստանում. Չ.Չ. /Կոմիտաս կաթողիկոսի պատվերով առաջին անգամ կազմում է հայկական տոմարը, վորը սակայն չի հաստատվում հայ յեկեղեցու կողմից»⁷: Իսկ Կոմիտաս կաթողիկոսը Անաստասից մոտ հիսուն տարի առաջ է աթոռակալել հայոց եկեղեցում՝ մինչև 625 թիվը: Եվ եթե հիմք ընդունենք Ա.Աբրահամյանի՝ Շիրակացու ծննդյան մոտավոր թվականը, այն է 610-ականի սկիզբը, Մեծ Համարողն այդ ժամանակ դեռ չէր էլ կարող մեկնած լինել արտասահման կրթություն ստանալու՝ տարիքի փոքրության պատճառով, ուր մնաց թե կատարել կաթողիկոսի պատվերը: Իսկ ըստ մեր քննության ստացված տարեթիվը՝ մոտ 630-ականի կեսերը, լրիվ կհամապատասխանի Անաստաս կաթողիկոսի և Անանիա Շիրակացու ժամանակակցությանը՝ ավագ-կրտսեր հարաբերությամբ:

Սամվել Անեցուց առաջ՝ 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոս կաթողիկոսն է վկայել Շիրակացու մասին՝ բարձր գնահատելով և՛ նրա անձը, և՛ նրա վաստակը: Իրեն նախորդած Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ուղղված նամակում նա գրում է. «Փոխան Յիսուսի համարձակիմք, միշտ սովորեալ յառա-

⁵ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 84:

⁶ Նույն տեղում, էջ 85:

⁷ **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտություն և տոմար, Առաջաբան Ա.Աբրահամյանի, Յերևան, 1940, էջ 7:

տաճիր պարզևս, զկարևորսն և զպիտանացուն յարատևական բաշխելով քեզ, որ ոչդ երբեք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ՝ որ բազում աշխատութեամբ և յաճաչու խոնջմամբ հաւաքեալ ի բազմագան և յոգնաբեղուն մատենից՝ յորում և ենթակայացեալ են ո՛չ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս, որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախ քան զքեզ՝ խրթնացեալ և թագնի ընդ գրունանաւ ծածկէին. զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայդոսիկ, յառաջնումն իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանս և կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս, յորում մթերեալ են տոգորք աստուածային և են ենթակայացեալ ամենայն արհեստ մակացութեան. և նախդասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարբոշ քանակէ տարակացեալք. իսկ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք. և մակացութիւնք, մատենագրութիւնք. և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական, թէպէտ և մասնաւոր զփոշէտեսական զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղունոցի անդր ի բազմավէպ մատենագրից Քաղդէացոց և յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ...»⁸: Թէն մեջբերման համար՝ ընդարձակ այս հատվածում միջնադարյան մեծ գիտնականը՝ Գրիգոր Մագիստրոսը, որը բազում գիտական ուսումնասիրությունների հեղինակ է և մի քանի լեզուների էր տիրապետում, կարծես յուրատեսակ վերլուծության է ենթարկել Շիրակացու կատարած տքնաջան և գիտական աշխատանքը՝ գործերն ու բարձր գնահատանքի արժանացրել հեղինակին:

Անանիա Շիրակացին հայ մատենագրության գործիչներից այն երջանիկ քչերից է, որի գործերը բազմաթիվ ընդօրինակումների են արժանացել մեր միջնադարյան գրիչների կողմից: Մա խոսուն ապացույց է նրա գործերի կարևորության և կիրառելիության փաստի մասին:

Նոր ժամանակներում ևս առավել է դարձել հետաքրքրությունը նրա անձի և գործերի հանդեպ: Շիրակացու, բնական և տիեզերական երևույթների քննության, աշխարհագրության, տոմարագիտության մասին նրա գործերի ուսումնասիրությամբ զբաղվել են հայագիտության մեծ երախտավորներ Քերովբե Պատկանյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, Սեն Արևշատյանը, Աշոտ Աբրահամյանը և ուրիշներ, որոնք հրատարակել կամ թարգմանել են /գրաբարից ռուսերեն, աշխարհաբար/ նրա առանձին գործեր, կազմել են քննական բնագրեր:

⁸ Գրիգոր Մագիստրոսի՝ Մատենադարանի թիվ 3062 ձեռագիր, էջ, էջ՝ 247բ, 248ա: Տե՛ս նաև՝ Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն և տոմար. Առաջաբան Ա.Աբրահամյանի, Յերևան, 1940, էջ 7-8:

Ա.Աբրահամյանը Գ.Պետրոսյանի հետ միասին ոչ միայն գրաբարից աշխարհաբար է թարգմանել թվաբանությանը, տիեզերագիտությանը, տոմարագիտությանը, աշխարհագրությանը վերաբերող նրա գործերը՝ ամփոփելով «Անանիա Շիրակացի» խորագրի տակ /Երևան, 1979թ./, այլև դեռևս 1940 թվին բազմաթիվ ձեռագրերի համադրությամբ կազմել է բնական երևույթներին, տիեզերագիտությանը, տոմարագիտությանը վերաբերող Մեծ Համարողի գործերի քննական գրաբար բնագիրը, ծավալուն առաջաբանով՝ «Տիեզերագիտություն և տոմար» ընդհանուր վերնագրումով:

Եթե որևէ մեկը փորձ անի Անանիա Շիրակացուն վերաբերող տասնյակների հասնող ձեռագրերի մեջ փնտրել նրա գործը համանուն՝ «Տիեզերագիտություն և տոմար» գլխագրով, ժամանակի զուր կորուստ կունենա: Քանի որ նման ամփոփ վերնագրում կատարել է մեծավաստակ գիտնական, պատմաբան Աշոտ Աբրահամյանը գրքի 1940թ. հրատարակության ժամանակ՝ ելնելով այնտեղ տեղ գտած նյութերի բնույթից. «Յեղնելով տեքստի բովանդակությունից, մենք նպատակահարմար համարեցինք զիրքը վերնագրել «Տիեզերագիտություն և տոմար»⁹: Այսպիսի բացատրություն է տալիս քննական բնագիրը կազմող հեղինակը:

Ձեռագրերում աշխատանքներն ամփոփված են «Առ խոստացեալսն» խորագրի տակ: Դրանից կարելի է եզրակացնել, որ երևի նրանից խնդրել են գրել նման բովանդակության մի գործ, և նա հանձն է առել կատարելու այն ու կատարել է: Իսկ իրականում այդ վերնագիրը ընդհանուր գործի մի գլուխն է:

Գրքում խոսվում է երկրի, երկնքի, արևի, լուսնի և մյուս մոլորակների փոխհարաբերության, արևի ու լուսնի խավարման, և երկրում ընթացող երևույթների վրա այդ ամենի ազդեցության, աստղերի շարժերի, նրանց գոյացման ու վերացման, կենդանակերպերի և մարդկանց ճակատագրի հարցում նրանց թվացյալ կանխորոշիչ նշանակության և այդ տարածված կարծիքի՝ Շիրակացու հերքման, ժամանակի և ժամանակաչափերի, նահանջ և ոչ նահանջ տարիների, տոմարագիտության, հայկական ամսանունների հիմքի բացահայտման, ծովերի ու նրանց՝ ընդերքում խոռոչների միջոցով միմյանց հետ գոյություն ունեցող ներքին կապերի (թեև արտաքինից նրանք շատ հեռու են իրարից), բնական երևույթների՝ ամպերի, անձրևների, կարկուտի, ձյան ու եղյամի և բնության հետ կապված շատ այլ իրողությունների մասին:

Անանիա Շիրակացին ուսումնասիրել է իրենից առաջ եղած շատ փիլիսոփաների գործեր և նյութեր քաղել նրանցից: Եվ այդ մասին չի էլ թաքցնում,

⁹ **Անանիա Շիրակացի**. Տիեզերագիտություն և տոմար. Առաջաբան Ա.Աբրահամյանի, Յերևան, 1940, էջ՝ 17:

այլ վկայակոչում է նրանց, ինչպես ս.Բարսեղին, Փիլոնին, որի «Ճառք» գործի Համաբարբառի կազմման վրա ենք աշխատում և այս ընթացքում շատ ընդհանրություններ ենք նկատել երկու հեղինակների գործերում: Ընդհանրություններ ենք նկատել նաև Զենոն Իմաստասերի «Յաղագս բնութեան» գործի հետ, թարգմանությունը՝ հունաբան դպրոցի ներկայացուցիչների, որի բնագրային համաբարբառը ևս կազմվել է մեր կողմից:/

Շիրակացին դեմ է գնում քաղղեական տարածված ու կարծրացած այն կարծիքին, թե մարդու կյանքը, ճակատագիրը, հաջողակ կամ անհաջողակ, երջանիկ կամ դժբախտ լինելը կախված է այն բանից, թե ո՞ր աստղի տակ է ծնվել: Եվ բացատրում է՝ որ այդպես լինել, էլ ո՞վ կպայքարեր կյանքում իր տեղը գտնելու համար, չէ՞ որ աստղերն արդեն կանխորոշել են մարդու ապագան: Կամ երբ իր արտահայտությամբ՝ չար փիլիսոփաները մարդկանց բարի կամ չար լինելը կապում են այդ նույն աստղերի հետ, այսինքն մարդն ինքը չէ մեղավոր իր կատարած հանցանքի համար, այլ այդպես են կանխորոշել աստղերը: Շիրակացին հակադրվում է այդ գաղափարին և հարցադրում անում, այդ դեպքում ինչի՞ համար են մարդկանց կողմից հաստատված կարգ ու կանոնը, օրենքներն ու դատավորները, չէ՞ որ եթե հանցագործը իր կամքով չի կատարել հանցագործությունը, այլ այդպես են կանխորոշել աստղերը, ուրեմն նա մեղավոր չէ, այլ աստղերն են մեղավոր: Եվ, քանի որ, ըստ իր տեսակետի, ամեն ինչ, այդ թվում և աստղերը ստեղծել է միակ արարիչը, ուրեմն աստվածն է մեղավոր: Մարդը չար է դառնում իր բնույթով ու վարած կյանքով, և ոչ թե աստղերի կանխորոշմամբ:

Այստեղ բացահայտ երևում է իրատես մտածողը՝ ոչ ամեն ինչ աստծո, նախախնամության հետ կապող բնագետ գիտնականը, որ առարկայական ձևով բացատրություն է տվել նաև Երկրի, Լուսնի, Արեգակի փոխհարաբերության, փոխկապվածության վերաբերյալ և եզրահանգել Երկրի՝ Արևի շուրջ դառնալու հանգամանքին: Ապրելով հանդերձ յոթերորդ դարում, երբ իշխող գաղափարախոսությունը քրիստոնեությունը, աստվածապաշտությունն էր, նա իր տեսակետները բացատրում ու մեկնաբանում է գիտական, այլ ոչ ենթադրյալ նախախնամության գաղափարներով: Եվ ընդունելի է համարում այն ճշգրիտ գաղափարները, որոնք բնական երևույթները ցույց են տալիս իրական լույսի տակ և ոչ թե վերացական, անհիմն բացատրություններով:

Իր գաղափարները նա մատուցում է համեմատությունների ու հարադրումների միջոցով, որպեսզի համոզիչ լինի, և հասու անգամ հասարակ մահկանացուին: Եվ երբ ընթերցում ես գրվածքը, թվում է, ոչ թե գիտական գործ ես ուսումնասիրում, այլ գեղարվեստական գիրք ես կարդում:

Մակայն լինելով իր դարաշրջանի մարդ, ինչ որ չափով կրելով նաև նրա գաղափարախոսությունը՝ ամեն ինչի հիմքն աստվածն է, երբեմն, երբ անհնար է տվյալ հարցի պարզաբանումը, ինչպես երկրի դիրքի՝ ինչի վրա հիմնված լինելը, կամ ծովի ջրերի՝ իրենց սահմանի մեջ և նույն մակարդակին մնալը՝ հակառակ նրա մեջ լցվող գետերի, և չթափվելը երկրի պտույտի ժամանակ, նա ապավինում է բարձրյալին, նման երևույթները վերագրելով արարչությանը, աստվածային հրամանին՝ հաստատելով իր միտքը Սուրբ Գրքից օրինակներ բերելով:

Աստղերի մեծ կամ փոքր, լուսավոր, կամ թույլ լույս արձակող լինելու երևույթը նա բացատրում է Երկրին նրանց մոտ կամ հեռու գտնվելու հանգամանքով: Երբ խոսում է արեգակի շուրջ երկրի շրջադարձության մասին, փորձում է այն ներկայացնել արևի հետ իր կիսարթմնի գրույցի ձևով, երևի խուսափելու համար կղերականների հնարավոր հալածանքներից: Ահա այդ հատվածը.

«Եւ արդ մի՛ զիս եպերէք, սիրելիք, գիտէ ծածկագէտն, զի ո՛չ ստեմ: Մինչդէռ էի յաղօթս առ առաւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւգինեայ, և միտք իմ յա՛յս խորհուրդս ծփէին, քուն էառ զիս: Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջանէր: Եւ ես յառաջն ընթանայի և ի գիրկս ընդունէի զնա. և նա էր պատանի անմորուս, ոսկեգիսակ, և շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր օճեալ, և ինքն սպիտակս և փայլունս զգեցեալ հանդերձս. և լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն: Եւ ես ասացի ցնա՛ եթէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ՝ աղէ՛ պատմեա ինձ. եթէ յորժամ ի մէնջ ծածկիս ու՛մ տաս լոյս, գո՞ն այլ կենդանիք ի ներքոյ երկրի՛ եթէ ոչ: Եւ նա ասէ ոչ, այլ լերանց և ափափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյս¹⁰»:

Գուցէ հենց այդպէս էլ եղէ՞լ է: Պատմությանը հայտնի քիչ մեծություններ չեն, որոնք իրենց գլուխգործոցները, հայտնագործությունները տեսել են երագում և իրականություն դարձրել արթմնի վիճակում, կամ կանխատեսել հետագա դարերում կատարվելիք իրադարձությունները՝ անգամ համաշխարհային նշանակությամբ: Այսպէս օրինակ.

Ղազար Փարպեցիի իր «Պատմութիւն Հայոց» երկասիրության ԺԷ գլխում ներկայացրել է Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի կիսարթմնի տեսիլն ու նրա մեկնաբանությունները Արշակունյաց թագավորության անկման, ապա հայոց թագավորության վերահաստատման, Գրիգոր Լուսավորչի տոհմից կաթողիկոսության ընդհատման, ապա նորից վերականգնման, նույնիսկ տարիների քանակն էլ է նշված՝ 350, թե քանի տարի հետո կնորոգվի կաթողիկոսական աթոռը

¹⁰ **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտություն և տոմար, 1940թ., Յերևան, էջ՝ 13-14:

նրա ժառանգորդների կողմից, կանխատեսում գալիք արյունահեղությունների՝ պատերազմների մասին, զգուշացում անապատից եկող համաշխարհային վտանգից և շատ այլ բաների մասին: Իսկ այդ տեսիլի մեկնաբանություններն արվել են դեռևս այն ժամանակ, երբ իշխում էին Արշակունիները, Հովվապետական աթոռին էր Մեծն Ներսեսը, և Սահակ Պարթևն էլ դեռ Հայրապետ չէր օծվել: Եվ սա ոչ թե Պատմիչի գեղարվեստական երևակայության արդյունք է, այլ ըստ երևույթին նա ձեռքի տակ ունեցել է Սահակ Պարթևի՝ իր տեսիլքի և նրա մեկնաբանությունների գրի առած բնագիրը, որից էլ վերցրել է նյութը, ապա թե ոչ, այն կվերագրվեր հենց Փարպեցուն: Ահա մեր ասածի ապացույցը. «Եւ արդ պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղել սրտիս, այլև թաքուցանել երկուցեալ զի մի երբէք իբրև զլացող պատուհասեալ դադարեցայց ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ. որ և գրով իսկ հրամայեաց ինձ զաւանդս զայս թողուլ աշխարհի»¹¹: Եվ ինչպես գիտենք Հայոց և համաշխարհային պատմությունից, այդ ամենը տեղի է ունեցել՝ թե՛ Հայոց Արշակունիների թագավորության անկումը, ապա և վերականգնումը Բագրատունիների, Արծրունիների կողմից, ապա նաև Կիլիկյան թագավորության հաստատումը, թե՛ Գրիգոր Լուսավորչի տոհմից կաթողիկոսության ընդհատումը, ապա և կաթողիկոսական աթոռին նորից Լուսավորչի ժառանգորդների բազմումը՝ ի դեմս Վահրամ Գրիգոր Պահլավունու և նրա հաջորդների, թե՛ խաչակրաց արյունահեղ պատերազմները, թե՛ անապատներից եկող աշխարհակործան սամումը՝ արաբների ու մոնղոլների արշավանքների տեսքով: Սա ևս մի հանիրավի անտեսում է՝ այս անգամ արդեն Սահակ Պարթևի հանդեպ, նրան հին մատենագրության մեջ հայտնի և համաշխարհային Տեսանողների՝ մարգարեների շարքը դասելու փոխարեն:

Շիրակացին իր կիսարթմնի երազը տեսել է «Մինչդեռ էի յաղօթս առ առաւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւզինեայ, և միտք իմ յա՛յս խորհուրդս ծփէին, քուն էառ զիս»,¹² իսկ Սահակ Պարթևը՝ Վաղարշապատի եկեղեցում՝ կաթողիկոս օծվելուց էլ առաջ: «Յառաջ քան զամս բազումս խորհուրդք անմխիթաբք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով և աղաչելով զԲարձրեալն շնորհել ինձ արու որդի... Եվ ես նստէի մերձ առ սեղանն Աստուծոյ ի սուրբ եկեղեցւոջն Վաղարշապատ քաղաքի»¹³ - պատմում է նա՝ Հայոց Հայրապետը: Այդպես էլ՝ Մաշտոցը հայոց տառերն ստեղծելիս, հետագայում էլ Մենդելեևը՝ քիմիական տարրերի իր աղյուսակը կազմելու ժամանակ:

¹¹ Ղազարայ Փարպեցոյ Պատմություն Հայոց, Երևան, 1982. էջ 82:

¹² Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, 1940, Յերևան. էջ 13:

¹³ Ղազարայ Փարպեցոյ ... էջ 64, 66:

Երբ հանձնառություն էինք վերցնում կազմելու Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության բնագրային համաբարբառը, հարց տրվեց՝ ինչու՞ Շիրակացի: Ստիպված էինք պատասխանելու, որ ինչպես ասում են, «*հայի բախտ*», Կոպեռնիկոսից ութ հարյուր տարի առաջ՝ դեռևս յոթերորդ դարում, Մեծ Հայոց Շիրակ աշխարհի Շիրակավան գյուղից մի հայ գիտնական, որը պատմության և գիտության մեջ հայտնի է Անանիա Շիրակացի անունով, այն միտքն էր հայտնել և դիտարկումներ, ուսումնասիրություններ կատարելով, տրամաբանական զուգահեռներ անցկացնելու օրինակներով ապացուցել իր միտքը, որ երկիրը պտտվում է իր և արեգակի շուրջ:

Եթե Կոպեռնիկոսի հայրը 15-րդ դարում խնդրում էր որդուն, որ կենդանության օրոք չհրապապակի իր տեսակետը՝ վախենալով որդու նկատմամբ ինկվիզիցիայի հալածանքներից, Շիրակացին նրանից ութ դար առաջ ազատ ու անկաշկանդ արձանագրել է այդ փաստը: Այն դեպքում, երբ 16-րդ դարում այսօրվա լուսավորյալ կոչված Եվրոպայում ինկվիզիցիան նման համարձակ միտք արտահայտելու համար խարույկի վրա այրում էր Ջորդանո Բրունոյին, կամ տնային կալանքի դատապարտում Գալիլեո Գալիլեին, որոնց չկարողացավ փրկել անգամ նրանց հզոր հովանավորներ Մեդիչիների զորեղ իշխանությունը, մեր թագավորագուրկ ու պետականագուրկ Հայաստան աշխարհում Անանիա Շիրակացին համարձակվել է հայտնել բազում ուսումնասիրություններով ու փորձերով հիմնավորված իր գաղափարները, որոնք հակասում էին տիրող գաղափարախոսությանը՝ ինչ որ չափով նաև դեմ ամեն ինչ աստծուն վերագրելուն: Բայց մեզանում, ինչպես միշտ, անհարկի կերպով անտեսվել, տեր չի կանգնվել մեր ունեցած գանձերին՝ ոչ նյութական, դրանց տեր կանգնողներ շատ կան, այլ հոգևոր, տվյալ դեպքում՝ գիտությանն ու գիտնականին՝ բարձրացնելու նրան համաշխարհային մակարդակի և ճանաչման: Եվ երբեք ձայն չի բարձրացվել՝ աշխարհի ականջին ու մտքին հասցնելու համար նման մեծ երևույթի գոյության փաստը: Ճիշտ է Շիրակացու գործերը քննության են առնվել, հրատարակվել են, նաև թարգմանվել վերը հիշատակված գիտնականների կողմից, բայց որ հատուկ, գրավոր ձևով շեշտվի այն փաստը, որ Կոպեռնիկոսից առաջ, Շիրակացին է յոթերորդ դարում արտահայտվել երկրի՝ արևի և իր շուրջը պտտման վերաբերյալ, չի նշվել:

Համաբարբառի կազմումով մեր նպատակն է եղել, թեկուզ արդարացի ընդվզմամբ վեր հանել և հանրությանը ներկայացնել այդ անարդարացի վերաբերմունքը մեծ Գիտնականի հանդեպ և մեր գնահատանքի ու հարգանքի տուրքը գոնե այդպես մատուցել Գիտության Մեծ Մարդուն:

Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գործի Համաբարբառը կազմվել է 1940 թվի հրատարակության հիման վրա, որի քննական գրա-

բար բնագիրը բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, ինչպես վերը նշվեց, կազմել և ծավալուն առաջաբանով հրատարակության է պատրաստել մեծ գիտնական, պատմաբան Աշոտ Աբրահամյանը՝ հիմք ընդունելով հիմնականում Մատենադարանի 2180 և 2762 թվահամարները կրող ձեռագրերը:

Համաբարբառը տվյալ հեղինակի, տվյալ գործի յուրատեսակ, ընդարձակ բառարան է, որտեղ ոչ միայն առանձին բառն է ներկայացվում նաև իր բազմիմաստությամբ, այլև բառակապակցություններն ու բայական հարադրությունները՝ տալով դրանք ամփոփ նախադասության մեջ: Համաբարբառի կազմումով յուրատեսակ ձևով երկրորդ կյանք է հաղորդվում տվյալ ստեղծագործությանը, գործին: Երբ գործը կա, լավագույն դեպքում այն կարդացվում և դրվում է մի կողմ: Իսկ երբ ուսումնասիրության համար անհրաժեշտություն է առաջանում հաճախակի անդրադառնալ բնագրին, նրա համաբարբառն արդեն դառնում է երկրորդ անփոխարինելի աղբյուր ուսումնասիրողի համար՝ բազմակի անգամ հեշտացնելով վերջինիս գործը, քանի որ նա այլևս ստիպված չի լինի մի բառի, հատվածի համար նորից վերընթերցել ամբողջ բնագիրը: Իսկ քանի որ բառարանից մարդիկ հաճախ են օգտվում, ուրեմն և վերհիշում տվյալ հեղինակին, ապա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գործի Համաբարբառի կազմումը մի նպաստ է, գնահատման ու մեծարանքի յուրատեսակ մի տուրք Մեծ Գիտնականի հանդեպ:

Եթե դրան էլ ավելացնենք, որ Համաբարբառները օդ ու ջրի պես պետք են հայագիտությանը զբաղվողներին ոչ միայն Հայաստանում, այլև առավելապես արտերկրի հայագետներին, և ոչ միայն հայագետներին, ապա կատարված բազմազան աշխատանքը արդարացված կլինի և իր նպատակին կծառայի:

Համաբարբառները կարող են աղբյուրագիտական մեծ արժեք ունենալ նաև պատմաբանների, բնագետների, ճշգրիտ գիտությամբ զբաղվողների, աստղաֆիզիկների, բժշկագիտության և արվեստի բնագավառի մասնագետների, նույնիսկ արհեստավորների համար, եթե նրանք ցանկանան իրենց արհեստի մասին տեղեկություններ իմանալ հին ժամանակներից:

Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության համաբարբառը միտումնավոր կերպով կազմված է համեմատաբար ավելի ընդարձակ բառահոդվածներով՝ ելնելով նյութի յուրահատկությունից: Այն դեպքերում, երբ խոսվում է բնության ու երևույթների փոխկապակցվածության, նրանց պատճառահետևանքային կապի մասին՝ չբավարարվելով միայն ստորոգում արտահայտելով, ինչպես կանոնակարգված է համաբարբառների կազմման սկզբունքներում, բառահոդվածները վերցված են ավելի ընդարձակ, չընդհատելու համար այդ կապը:

Աշխատության մեջ բազմաթիվ են թվերն ու թվականները, որոնք արտահայտված են հայկական այբուբենի տառերով: Շատ են այն թվականները, որոնց թեքման կամ ածանցման դեպքում ածանցյալները գրքում զատված են ներկայացված տվյալ բառից: Այսպիսի գրությունները նույնությամբ թողնել չէր կարելի: Հակառակ դեպքում ստիպված պետք է լինեինք այդ զատված մասնիկները ևս ներկայացնել որպես գլխաբառեր, որը և՛ սխալ կլիներ, և՛ անհասկանալի կմնար որպես առանձին բառ, քանի որ դրանք իրականում մասնիկներ են՝ ածանցյալներ, և ոչ թե բառեր: Այդ պատճառով համապատասխան թվականը՝ որպես գլխաբառ, ներկայացրել ենք կից գրությամբ, իսկ բառահոդվածում, կողքին՝ փակագծերում տվել գրքում եղած ձևը: Այդպես ենք վարվել միայն տվյալ թվական գլխաբառի դեպքում՝ համաբարբառը ծանուցումներով չձանրաբեռնելու նպատակով:

Ինչպես օրինակ.

ԲԺ. - Իսկ այլ ախտաբք և ապախտաբք ըստ **ԲԺիցո** /գրքում՝ ԲԺ իցո. Հ.Հ./ ասեն բաժանեալ: - 20.

ԲԺ.ԱՆ - Զխոյէ ասեն թէ՛ գլուխ է աստեղատանց **ԲԺանիցն** /գրքում՝ ԲԺ անիցն. Հ.Հ./, և շնորհատու. - 20. Եւ գրոլորակ պատկերացն աստեղատանցն, **ԲԺ.ան** /գրքում՝ ԲԺ. ան. Հ.Հ./ մասն բաժանեն. քանզի ըստ թուոյ, Լ աւուր կազմեալ է գրոլորակն. և արեգակն տարւոյ ի տարի յոր գայ ի շուրջ **գ.ԲԺ.-ան** աստեղատամբքն բոլորակին: - 24.

Վերջին հասվածը թողել ենք, որպեսզի ցույց տանք նման կառույցների գրության ճիշտ ձևը, որ թվականների թեքման կամ ածանցման դեպքում ավելացած մասնիկները՝ ածանցյալները կից են գրվում:

Զ.ԵԱԿ - Քանզի այս է յայտնի պատճառ. վերին և ներքին կիսագունդքն առ է պարունակացո գեր ի վերոյ երկրիս յերկուս բաժանեալ գիշերոյ և տունջեան քառեակ **Զ.եկօք**: /գրքում՝ Զ եկօք. Հ.Հ./ - 45.

Ձեռագրերի ուսումնասիրությունը ևս հաստատել է մեր վարվեցողության ճշտությունը: Մատենադարանի 2762 թվակիր ձեռագրում, որը, ի թիվս այլ ձեռագրերի, հիմք է հանդիսացել քննական բնագրի կազմման համար, թվականները ածանցման և թեքման դեպքերում գրված են միասին՝ կից:

Հակառակ այն բանի, որ յոթերորդ դարում **օ** տառը այդպիսի պատկերով դեռ գործածության մեջ չէր մտել, այն գրվում էր **աւ** երբարբառի տեսքով, տպագիր բնագրում այն լայն կիրառություն ունի՝ ելնելով այդ ժամանակվա /1940թ./ ընդունված ուղղագրական կանոններից: Այդ իսկ պատճառով էլ յոթերորդ դարի հեղինակի գործի Համաբարբառն ունի նաև **օ** տառով սկսվող բառեր: Սրանով ևս նա տարբերվում է մինչ այդ մեր կազմած համաբարբառներից:

Աշխատանքի ընթացքում բնագիր հրատարակության մեջ նկատել ենք երկու տասնյակից ավելի սխալագրություններ, տպագրական վրիպակներ: Սխալագրությունները տեղի են ունեցել նաև ժամանակին իշխող ուղղագրության հետևանքով: Թեև համաբարբառի կազմության սկզբունքներում արգելվում է բնագրի համեմատ փոփոխություններ կատարել, սակայն այդ բացահայտ վրիպակները նույնությամբ թողնել համաբարբառում, սխալ կլիներ՝ թյուրընթերցումների տեղիք տալու իմաստով: Այդ պատճառով էլ ստիպված ենք եղել շտկել սխալները՝ համապատասխան բառի կողքին, փակագծերի մեջ տալով գրքում եղած բառաձևը: Համաբարբառի վերջում ծանուցման կարգով տրված է այդ ուղղումների ցանկը:

Եզրահանգում. Եթե նկատի ունենանք, որ աշխատանքն իբրև զեկուցում ներկայացվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագիրը կրող հեղինակավոր միջազգային գիտաժողովում, ապա աներկբա կարող ենք ասել, որ Անանիա Շիրակացին իր գործերով Շիրակի /և ոչ միայն/ պատմամշակութային մեծագույն արժեքներից է, և արդի ժամանակներում նրա գործերի և անձի գնահատությունն է նաև նրա լավագույն գործի Համաբարբառի կազմումը: Եվ սա հենց մի կապ է, նետված մի կամուրջ անցյալի ժառանգության և ներկայի միջև:

АНАНИЯ ШИРАКАЦИ И АМАБАРБАР (КОНКОРДАНС) ЕГО РАБОТЫ “ КОСМОЛОГИЯ И КАЛЕНДАРЬ”

Оганисян А.

Ключевые слова: *Анания Ширакаци, Хамарох, космология, планета, солнце, звезда, небесные украшения, календарь, зодиакальный, Конкорданс.*

В контексте рассмотрения личности А. Ширакаци в рамках международной конференции “Историко-культурное наследие Ширака: актуальные вопросы арменоведения” можно с уверенностью утверждать, что Анания Ширакаци является одним из величайших деятелей и важной историко-культурной ценностью Ширака /и не только Ширака/. В наши дни своеобразной оценкой его личности и работ является также составление “Амабарбара” (конкорданса) на основе его лучшей работы.

Это и есть та самая связь - мост между наследием прошлого и настоящим.

**ANANIA SHIRAKACI AND CONCORDANCE
"COSMOLOGY AND CALENDAR"
*Hovhannisyan H.***

Key words: *Anania Shirakaci, Hamarog, cosmology, planet, sun, star, celestial jewel, calendar, zodiac, Concordance.*

Taking into consideration that the international conference bears the headline of "Historical and cultural heritage and modernity of Shirak", we can certainly say that Anania Shirakatsi is one of the most prominent historical and cultural values of Shirak region. The creation of "Hamabarbar"-Concordance based on his best work is also another act of evaluation of his works and his figure, in our times.

And this is also another link, a bridge between the heritage of the past century and the present.

R e f e r e n c e s

1. **Anania Shirakaci**, Tiezeragituthyun ev tomar. Yerevan, Izd. Haypethrat. 1940 /**In Armenian**/.
2. **Anania Shirakaci**, Yerevan. Izd. Sovetakan grox. 1979 /**In Armenian**/.
3. **Grigor Magistros**, Matenadarani no. 3062 dzeragir /**In Armenian**/
4. **Lazara Pharpecvo** Patmuthyun Hayoc ev Thukhth ar Vahan Mamikonyan, Tphkhis, 1904 /**In Armenian**/.
5. **Lazar Pharpeci**, Hayoc patmuthyun, Yerevan, Izd. Yerevani Hamalsaran, 1982 /**In Armenian**/.
6. **Samvel Aneci**, Havaqmunq i groc patmagrac. Vagarshapat, 1893 /**In Armenian**/.
7. **Qerovbe Patkanyan**, Ananiayi Shirakunvo mnacordq banic. S.Peterburg, 1877 /**In Armenian**/.

Ընդունվել է՝ 05.10. 2019

Գրախոսվել է՝ 12.11.2019

Հանձնվել է տպ.՝ 21.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայկանուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
գիտաշխատող, էլ փոստ՝ mtatev@mail.ru